—Դէ, ըսեց, իդա պղինձ լէ տարէք ծախէք, բաժին էրէք ձեր տաւրի մսի տեղ. վայ է էկի ձեր գլխուն, ըսեց, օր ճանգ մի կորեկ իմ ախպօր հախից կտրիք, ձեր գեղ կ'էնիմ Դաւթի աւիրած։

Ըսին.—Ջանըմ, առ քու խաղէն մըղնէ հեռըցի, մենք քու ախպօր հախ չընք կտրի։

Էկաւ, հասաւ ախպօր կուշտ. էկաւ, տեսաւ հըլա ախպէր կ'իլայ։

Ըսեց.—Ա՛խպէր, յըր ե՞ր իլաս. դարդ կ'էնիս թէ աղն ու եղ չըմ բերի, էլի՞ հրիսէն կի՞, իրկուն գնա աղն ու եղ լէ վրէն կի՞։

Ըսեց.—Ա՛խպէր, ի՞նչ էնիմ, իմ նախրի միջէն քառասուն կով է տարած, ես չ'իլամ՝ ո՞ր պդի լայ։

Ըսեց.—Տարեր իմ, կովերու կաշին տէրբըտէր էրեր իմ։ Ըսեց, թամբի իմ էրի՝ մէկ ճանգ կորեկ քու հախից պդի չ'կտրին. օր կտրին՝ ընձի ըսէ, կ'երթամ գեղ կ'էնիմ Դաւթի աւիրած։

Ըսեց.—Էլի իմ տաւար ջոկէ, ես էրթամ։

Ըսեց.—Դըռ կէս օր ա, էս վախտ դո՞ր կ'տանիս նախիր։

Ըսեց.—Զէ՛, պդի իմ նախիր ջոկիս, ես էրթամ։

Ջոկեց, նախիր տուեց առէջ։

Քշեց նախիր, լցեց Սասունայ մէջ։

Քեռի-Թորոսիկն էկաւ առէջ թէ՝—Շո՛ւն շան օրտի, պլէճկերի տղայ, իդա նախրի վա՞խտ ա, օր դու բերեր իս։

Դաւիթ լէ վերցուց թէ՝—Քեռի՛-Թորոսիկ, մունաթ կ'էնիմ՝ ընձի նախրուտենից ազատ էնիս. էրթանք քըզի դունեալըգի մալ խաղենէն տամ, ընձի ազատ էրա[1])։

Քեռի-Թորոսիկ ըսեց.—Դէ քէլէ, տեսնիմ։

Ու Դաւիթ ընկաւ առէջ, Քեռի-Թորոսիկ լէ յեղև. գացին էլան սար, հասան դևերու յէրին, մտան յէրի մէջ. քառասուն

---

[1]) Ա. վարիանտում Դաւիթ շարունակ Քեռի-Թորոսի հետ խօսելիս միայն այս խօսքերն է կրկնում. «Քեռի-Թորոս, բիրադի քըզի, Քուռակէ-Ջալլաթին տաս ընձի», իսկ Քեռի-Թորոսը ոչինչ չէ հասկանում և միայն քուռակը տեսնելուց յետոյ գլխի է ընկնում։